ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏԵՐԻ ԱՌԱՋ

(ՆԵՐԲԱՑԱԿԱՆ ՄԵՂԵԴԻ)

ԱՐՇԱԼՈՅՍ ՄԽԻԹԱՐԵԱՆԻ

Լաց, կոծիր, ով ազգ, որ լքեալ թողիր
Դրախտանըման հայրենի երկիր,
Ուր կաթն է աղբիւր, դաշտեր պըտղալից,
Ուր մեղր է կաթում ծառի ճիւղերից։
Աւերուած պարիսպն Երուսաղէմի
Դեռ քեզ է ողբում, աներախտ որդի,
Դեռ քեզ է լալիս տըխուր Յորդանան,
Քեզ է շըշընջում հովն առաւօտեան։
Ո՞ւր ես թափառում... Փորձը դարերէ
Բաւական չէ՞ քեզ, ով անմիտ գերի,
Բաւ ան չե՞ն քեզ ապտակ, հայհոյանք,
Թուք, մուր, անարգանք, շըղթայ ու կապանք.
Հերիք չողողե՞ց քո անմեղ արիւն
Գիւղ ու քաղաքներ. քո լաց ու վայիւն
Հերիք չը խեղդւե՞ց մըթին բանդերում,
Աւեր տանըդ մէջ, անձայն տառապում.
Ե՛կ, եկ, հընութեան անէծք—թօթափել
Վաղուց անցածի հետ օրն է ցընդել
Եւ Երուսաղէմն հիմա ողբաձայն
Քեզ, քեզ է կանչում, ո՜վ տարագրական։

1891 Թ., Հոկտեմբերի 9։